ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 հունիսի ուրբաթ 2026
տպագրության ԺԵ տարի

75
(3284)

100 դրամ

ք. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՊԱՏԳԱՄԱՎՈՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ ԵՆ «ԲՌՆԵԼ»

Նախընտրական շրջանում բազմաթիվ անձանց նյութապես շահագրգռելու եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման վերաբերյալ քրեական վարույթի շրջանակներում «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու Արթուր Աբրահամյանի նկատմամբ որպես խափանման միջոց է ընտրվել կալանքը, հայտարարվել է հետախուզում: Այս մասին հայտնում են ՀՀ քննչական կոմիտեից: Մինչ այդ էլ «Ուժեղ Հայաստան» դաշինքի պատգամավորի թեկնածու Հայկ Ավագյանի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել էր կալանքը եւ հայտարարվել էր հետախուզում: Ավելի վաղ ՔԿ-ն հայտնել էր, որ ՀՀ քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերի քննության գլխավոր վարչության ընդհանուր բնույթի եւ ընտրական հանցագործությունների քննության վարչությունում բազմաթիվ անձանց նյութապես շահագրգռելու եւ առանձնապես խոշոր չափերով փողերի լվացման վերաբերյալ քրեական վարույթի նախաքննության ընթացքում «Ուժեղ Հայաստան»-ի պատգամավորի թեկնածուներից 6-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 46-236-րդ հոդվածի 2-րդ մասով եւ 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետով: Վերջիններիս վերաբերյալ կայացվել են ձերբակալման որոշումներ, որոնց կատարումը հանձնարարվել է ՆԳՆ ոստիկանությանը: Նախաքննության ընթացքում թեկնածուներից 2-ը հայտնաբերվել են, եւ նրանց նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Քրեական վարույթի նախաքննությունը շարունակվում է:

«Ժողովուրդ» օրաթերթը պարզեց, որ ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է Հայաստանի խաղողագործության եւ գինեգործության հիմնադրամի կողմից ստեղծված «Խաղողի արժեշղթայի միասնական էլեկտրոնային տեղեկատվական համակարգը» փոխանցել պետական կառավարման համակարգին՝ էկոնոմիկայի նախարարությանը: Նախագծի համաձայն՝ համակարգը պետությանը փոխանցվելու է նվիրատվության կարգով եւ ներառելու է ոչ միայն ծրագրային ապահովումը, այլեւ դրա նկատմամբ բոլոր բացառիկ գույքային իրավունքները՝ այդ թվում ծրագրային կոդերը, տվյալների բազաները, GIS համակարգերը, տեխնիկական փաստաթղթերը եւ ամբողջ թվային ենթակառուցվածքը: Նախագիծը հանրային քննարկման է դրվել 2026 թվականի հունիսի 11-ից եւ կտեւի մինչեւ հունիսի 28-ը: Այդ ընթացքում քաղաքացիները, մասնագետներն ու շահագրգիռ կողմերը կարող են ներկայացնել իրենց առաջարկներն ու դիտարկումները: Ի՞նչ է նախատեսում նախագիծը: Փաստաթղթի համաձայն՝ համակարգը հանդիսանում է գյուղատնտեսության թվայնացման առանցքային հարթակ, որը ներառում է՝ խաղողի այգիների գրանցում, արտադրողների ռեգիստր, մթերման պայմանագրերի վերահսկում, ինչպես նաեւ աշխարհագրական տվյալների (GIS) ինտեգրում:



Մանրամասները՝ ArmLur.am կայքում

«Ժողովուրդ» օրաթերթը պարզել է, որ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը (ԿԳՄՍՆ) հանրային քննարկման է ներկայացրել կառավարության որոշման նախագիծ, որով նախատեսվում է ֆուտբոլի եւ ֆուտզալի ազգային հավաքականներում ընդգրկված մի շարք մարզիկների տրամադրել պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում: Նախագծի համաձայն՝ տարկետումը կտրամադրվի 2026 թվականի ամառային զորակոչից մինչեւ 2028 թվականի ամառային զորակոչը, իսկ որոշ դեպքերում՝ մինչեւ 26 տարին լրանալը: Այն վերաբերում է Հայաստանի մինչեւ 21 եւ մինչեւ 19 տարեկանների ֆուտբոլի ազգային հավաքականների, ինչպես նաեւ ֆուտզալի ազգային հավաքականի մարզիկներին: Փաստաթղթում նշվում է, որ որոշման հիմքում մարզական պատրաստության շարունակականության ապահովման անհրաժեշտությունն է: Ըստ հիմնավորման՝ պատանեկան եւ երիտասարդական տարիքում բարձր արդյունքներ գրանցած մարզիկների համար պարտադիր զինվորական ծառայությունը կարող է խաթարել մարզական առաջընթացը եւ բացասաբար անդրադառնալ նրանց միջազգային մրցունակության վրա: Նախագիծը հանրային քննարկման է դրվել 2026 թվականի հունիսի 1-ից եւ կշարունակվի մինչեւ հունիսի 16-ը: Այդ ընթացքում քաղաքացիներն ու շահագրգիռ կողմերը կարող են ներկայացնել իրենց առաջարկություններն ու դիտարկումները:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

Թեեւ ընտրական գործընթացները դեռ ամբողջությամբ չեն ավարտվել, իշխանական թիմում արդեն ակտիվ քննարկումներ են ընթանում ապագա պաշտոնաբաշխումների շուրջ: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ ՔՊ ներսում հատկապես վարչության անդամներն ու խմբակցության ղեկավար կազմի ներկայացուցիչները սկսել են առաջիկա քաղաքական վերադասավորումների հաշվարկները՝ ակնկալելով պաշտոնական առաջխաղացում: Մեր աղբյուրների փոխանցմամբ՝ իշխանության ներսում արդեն քննարկվում են հնարավոր նշանակումների, պաշտոնների փոխատեղումների եւ նոր պատասխանատվությունների հարցերը: «Ժողովուրդ»-ի տեղեկություններով՝ ՔՊ-ի տարբեր ներկայացուցիչներ իրենց մասնակցությունն ու ակտիվությունը նախընտրական եւ ներքաղաքական գործընթացներում դիտարկում են որպես ավելի բարձր պաշտոններ ստանալու հիմք եւ առաջխաղացում են ուզում: Իշխանական ճամբարում, փաստորեն, արդեն մեկնարկել է ներքին «կադրային մրցավազքը», որտեղ շատերը փորձում են իրենց բաժինն ունենալ իշխանական «կարկանդակից»:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՊԵՏՔ Է ՓՈԽՎԻ ԱՄԲՈՂՋ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՇՏԸ»

ArmLur.am-ը զրուցել է «Քոչարի» կուսակցության վարչապետի թեկնածու Արսակ Սարգսյանի հետ:



- Ընտրությունների նախնական արդյունքներն արդեն հրապարակվել են: Դուք ընդունո՞ւմ եք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հրապարակած տվյալները: Ձեր գնահատմամբ՝ այս ընտրությունները լեգիտի՞մ են, թե՞ ոչ:

- Ո՛չ, մենք չենք ընդունում այդ արդյունքները: Մենք նույնիսկ բողոք ենք ներկայացրել, սակայն մեզ պատասխանել են, որ ժամկետների հետ կապված խնդիր կա: Մասնավորապես, Ապարանի մեր ընտրողներից մոտ 90 մարդ դիմել է մեզ՝ նշելով, որ իրենք մասնակցել են ընտրություններին, բայց իրենց ձայները չեն արտացոլվել: Երբ տեղամասերի համարները տրամադրվեցին, մենք դիմեցինք համապատասխան մարմիններին: Հիմա սպասում ենք, որ մեր դիմումը կվերանայվի:

- Դուք նաեւ նախընտրական շրջանում հայտարարում էիք, որ ընտրությունները պետք է հետաձգվեն: Ինչո՞վ էր պայմանավորված այդ դիրքորոշումը:

- Մենք դեռ քարոզարշավի ընթացքում բաց նամակով դիմել էինք կառավարությանը՝ նշելով, որ առողջ քաղաքական դաշտ գոյություն չունի: Մի կողմից կար պետական ռեսուրսների եւ մեծ ֆինանսական միջոցների օգտագործում, մյուս կողմից՝ մրցակցություն միայն գումարների հաշվին: Ժողովրդի իրական շահերը երկրորդ պլան էին մղվել: Բացի այդ, ամբողջ քարոզարշավը վերածվել էր արտաքին քաղաքական բեւեռների բախման: Հասարակության մեջ ավելանում էր ատելության խոսքը՝ մարդկանց բաժանելով տարբեր ճամբարների: Մենք առաջարկում էինք հետաձգել ընտրությունները, որպեսզի հնարավոր լինի ձեւավորել նորմալ քաղաքական միջավայր:

- Եթե ընտրությունները չեք համարում լեգիտիմ, ի՞նչ եք սպասում վերջնական հաշվարկից:

- Չգիտեմ՝ մեր ձայները կվերահաշվարկվեն, թե ոչ: Սպասում ենք ԿԸՀ-ի որոշմանը: Բայց իմ փորձը ցույց է տալիս, որ եթե ընտրությունից հետո հաջորդ օրը ժողովուրդը փողոց դուրս չի գալիս, գործընթացը սովորաբար արդեն այլ ուղղությամբ է գնում: Եթե քաղաքական ուժերը վերցնում են մանդատները, նրանք փաստացի ընդունում են ստեղծված իրավիճակը: Ես կարծում եմ, որ այդ դեպքում իշխանության համար հեշտ կլինի ձեւավորել մեծամասնություն:

- Դուք ասում եք, որ ընդդիմադիր ուժերը կարող են գործարքի գնալ իշխանության հետ: Ինչո՞ւ եք նման կարծիք հայտնում:

- Ես կարծում եմ, որ այդ ուժերը խոցելի են եւ կարող են տարբեր պայմանավորվածությունների գնալ: Եթե նրանք իսկապես պատրաստ լինեին կտրուկ պայքարի, այդ քայլերը կարվեին դեռ ընտրություններից առաջ: Հիմա կարող են լինել տարբեր առաջարկներ, տարբեր պայմանավորվածություններ:

- Ձեր կարծիքով՝ իշխանափոխության հասնելու ի՞նչ ճանապարհ կա՝ փողոցային պայքա՞րը, ընտրություննե՞րը, թե՞ այլ տարբերակ:

- Մենք ասում ենք՝ պետք է ոչ թե պարզապես իշխանափոխության մասին խոսել, այլ ընդդիմափոխության: Պետք է փոխվի ամբողջ քաղաքական դաշտը: Այսօր փողոցային պայքարի ռեսուրսը թուլացել է: Ո՛չ իշխանությունը, ո՛չ ընդդիմությունը չեն կարող երկարատեւ հանրահավաքներ կազմակերպել միայն կոչերով: Մարդիկ հոգնել են այդ ձեւաչափից: Մեր առաջարկն այն է, որ եթե ընդդիմադիրները վստահ չեն արդյունքների նկատմամբ, կարող են չվերցնել մանդատները, եւ հնարավոր է՝ առաջանան նոր ընտրությունների պայմաններ:

- Ձեր նախկին թիմակիցներից ոմանք Ձեզ մեղադրում են, որ Դուք պաշտպանում եք Նիկոլ Փաշինյանի քաղաքական գիծը: Ինչպե՞ս եք արձագանքում:

- Ես ինձ համարում եմ իրական ընդդիմություն: Նիկոլ Փաշինյանի հետ որեւէ կապ չունեմ եւ նրա գաղափարակիցը չեմ: Ես չեմ լսել այդ բոլոր հայտարարությունները, որովհետեւ սովորաբար չեմ հետեւում, թե ով ինչ է ասում իմ մասին: Բայց ցավալի է, երբ մարդիկ տարբեր բաներ են ասում հրապարակային, իսկ փակ քննարկումների ժամանակ այլ դիրքորոշում ունեն:

- Խոսվում է նաեւ այն մասին, որ Ձեր թիմի ներսում եղել են տարաձայնություններ, այդ թվում՝ մեքենաների, քարոզչական նյութերի հետ կապված: Ի՞նչ կասեք:

- Այդ թեմայով կան ձայնագրություններ: Օրինակ՝ քննարկվել է մեքենաների վրա քարոզչական պիտակներ տեղադրելու հարցը: Այդ ամենը կազմակերպչական գործընթաց էր, ոչ թե որեւէ այլ բան:

- Ձեր ուժը ընտրություններում ստացել է մոտ 0,4 տոկոս ձայն: Արդյո՞ք սա այն արդյունքն էր, որի համար պայքարում էիք:

- Ո՛չ, իհարկե ոչ: Մենք նման արդյունքի համար չէինք պայքարում: Սակայն պետք է հաշվի առնել, որ մենք շատ ուշ սկսեցինք մասնակցել գործընթացին: Կազմակերպչական խնդիրներ կային, ֆինանսավորման հարցեր կային: Բանկերը երկար ժամանակ չէին բացում հաշիվներ, քանի որ մեզ համարում էին ռիսկային: Մինչդեռ նախկինում ես նույն բանկերում ունեցել եմ անձնական եւ բիզնես հաշիվներ առանց որեւէ խնդրի:

- Դուք համարո՞ւմ եք, որ ձեր նորաստեղծ ուժը կարող է մրցակցել ավելի խոշոր քաղաքական ուժերի հետ:

- Այո, կարծում եմ՝ նորմալ պայմաններում մենք կարող ենք ավելի մեծ արդյունք գրանցել: Եթե լիներ հավասար քարոզարշավ, հավասար ֆինանսական հնարավորություն, մեր արդյունքը շատ ավելի բարձր կլիներ:

- Ձեզ նաեւ մեղադրում են, որ փոքր ուժերը մասնատում են ընդդիմադիր դաշտը եւ փոշիացնում ձայները: Ինչպե՞ս եք գնահատում այդ քննադատությունը:

- Ես համաձայն չեմ այդ մոտեցման հետ: Մեր ընտրողները այն մարդիկ էին, որոնք գուցե ընդհանրապես չէին գնա ընտրության կամ չէին ընտրի մյուս ուժերին:

Զրուցեց՝ ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՏՐԱՍՏՎՈՒՄ Է ԸՆԴՈՒՆԵԼ

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը որոշում է ստորագրել, որով ստեղծվում է միջգերատեսչական աշխատանքային խումբ՝ 2029 թվականին Հայաստանում անցկացվելիք ՖԻՖԱ Մ-20 աշխարհի երիտասարդական առաջնության կազմակերպման եւ անցկացման աշխատանքները համակարգելու նպատակով:

Խոսքը վերաբերում է վարչապետի N 498-Ա որոշմանը, որով, «Կառավարության կառուցվածքի եւ գործունեության մասին» օրենքի 7-րդ հոդվածի 16-րդ մասի հիման վրա, ձեւավորվում է հատուկ միջգերատեսչական աշխատանքային խումբ: Որոշման մեջ նշվում է, որ աշխատանքային խումբը ստեղծվում է «2029 թվականի ՖԻՖԱ Մ-20 աշխարհի երիտասարդական առաջնության (ՖԻՖԱ Մ-20 աշխարհի գավաթ 2029) կազմակերպման եւ անցկացման նպատակով»:

Վարչապետի որոշմամբ հաստատվել է նաեւ աշխատանքային խմբի կազմը, որը ներառելու է տարբեր պետական գերատեսչությունների ներկայացուցիչների՝ մրցաշարի նախապատրաստական աշխատանքները համակարգելու համար:

Հիշեցնենք, որ ավելի վաղ հայտնի էր դարձել, որ Հայաստանը եւ Վրաստան համատեղ հայտ են ներկայացրել 2029 թվականի ՖԻՖԱ-ի մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունը հյուրընկալելու համար: Մրցաշարի անցկացումը ենթադրում է լայնածավալ կազմակերպչական եւ ենթակառուցվածքային աշխատանքներ՝ սկսած մարզադաշտերի եւ մարզաբազաների պատրաստումից մինչեւ տրանսպորտային ու անվտանգության միջոցառումների իրականացում:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

«ԵՐԲԵՎԷ ՉԵՆՔ ԹԱՔՑՐԵԼ ԴԱ»

Գագիկ Ծառուկյանի մամուլի խոսնակ Իվետա Տոնոյանը գրում է. «Քանի որ անդադար զանգեր եմ ստանում տարբեր լրատվամիջոցների գործընկերներից՝ Նիկոլ Փաշինյանի կողմից հնչեցված արտահայտություններն ու մեղադրանքները մեկնաբանելու խնդրանքով, ստիպված եմ արձագանքել: Ցավոք, Հայաստանի Հանրապետությունում վերջին շրջանում ձեւավորվել է այնպիսի անառողջ մթնոլորտ, որտեղ յուրաքանչյուր ոք կարող է ասել կամ գրել այն, ինչ ցանկանում է՝ առանց պատասխանատվության զգացման: Սակայն առնվազն տարօրինակ եւ անընդունելի է, երբ այդ գործելակերպը որդեգրում է երկրի վարչապետը: Այն ժամանակ, երբ ԲՀԿ-ն եւ այլ քաղաքական ուժեր զբաղված են ընտրությունների արդյունքների վիճարկման, վերահաշվարկների եւ յուրաքանչյուր քաղաքացու քվեի պաշտպանման գործընթացներով՝ փորձելով վերականգնել արդարությունը, երկրի վարչապետը հանրային օրակարգ է բերում անհասկանալի պիտակավորումներ եւ գնահատականներ: Ի վերջո, ի՞նչն է պետք հերքել: Ստոյկա տալու վերաբերյալ արտահայտությո՞ւնը, իշխանության հետ գործարքի գնալու մասին խոսակցությո՞ւնը, որը ինչ որ մեկը շրջանառության մեջ էր նախօրեին դրել ու ես արդեն հերքել եմ, բայց ասօր արդեն հասել է վարչապետի բրիֆինգի ժամանակ քննարկմանը: ԲՀԿ նախագահ Գագիկ Ծառուկյանի արտաքին աշխարհի հետ ունեցած կապե՞րը, որոնց մասին ամբողջ աշխարհն է տեղյակ: Այո՛, մենք ունենք միջազգային լայն եւ բաց համագործակցություն, եւ երբեւէ չենք թաքցրել դա: ՌԴ Եդինայա Ռոսիա կուսակցության հետ մեր գործընկերային հարաբերությունները, պաշտոնական հանդիպումները եւ փոխադարձ այցերը բազմիցս հրապարակայնորեն ներկայացվել են: ԲՀԿ-ն հանդիսանում է Եվրոպայի պահպանողականների եւ ռեֆորմիստների ընտանիքի անդամ՝ իրականացնելով տարբեր ծրագրեր եւ փոխադարձ այցեր: Շատ լավ հարաբերություններ ունենք արաբական աշխարհի մի շարք քաղաքական, հասարակական եւ գործարար շրջանակների հետ, ինչի մասին տեղյակ են բոլորը: ԱՄՆ տարբեր ազդեցիկ շրջանակների հետ ունենք գործընկերային կապեր եւ համագործակցության ծրագրեր, որոնց մասին եւս հրապարակային խոսել ենք: Հիմա ի վերջո ի՞նչը հերքեմ կամ մեկնաբանեմ»:

ԱՆՑԱԿԵՏԸ ԿԲԱՑՎԻ

Հայաստանի եւ Թուրքիայի միջեւ գտնվող «Մարգարա» անցակետը կբացվի հունիսի 12-ից մինչեւ 22-ը, որպեսզի Հայաստանի կողմից Լիբանան ուղարկվող մարդասիրական օգնության բեռները տեղափոխվեն Թուրքիայի տարածքով. Կառավարությունն ընդունել է որոշում: ՀՀ-ի եւ Լիբանանի Հանրապետության համապատասխան գերատեսչությունների ներկայացուցիչների աշխատանքային հանդիպումների արդյունքում պայմանավորվածություն է ձեռք բերվել քննարկել նաեւ Հայաստանի կողմից Լիբանանին հումանիտար աջակցություն ցուցաբերելու հարցը: Ըստ այդմ՝ հնարավորություն կստեղծվի մարդասիրական օգնությունն արագ եւ նվազ ծախսերով հասցնել Լիբանան:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԸ

Ալբանիայում արդեն տասներորդ օրն անընդմեջ շարունակվում են բողոքի ցույցերը, որոնց մասնակիցները պահանջում են վարչապետ Էդի Ռամայի կառավարության հրաժարականը: Ցուցարարները չորեքշաբթի երեկոյան հավաքվել են մայրաքաղաք Տիրանայի Սկանդերբեգի հրապարակում, ապա երթով շարժվել դեպի խորհրդարան: Բողոքի ակցիայի ընթացքում հնչել են «Ռաման՝ բանտ, Բերիշան՝ բանտ» վանկարկումները՝ ուղղված ինչպես գործող վարչապետ Էդի Ռամային, այնպես էլ նախկին վարչապետ եւ ներկայում ընդդիմադիր Դեմոկրատական կուսակցության առաջնորդ Սալի Բերիշային: Շարժումն ի սկզբանե սկսվել էր Ալբանիայի հարավում գտնվող Սազան կղզում եւ Նարտայի ծովածոցի պահպանվող տարածքում նախատեսվող զբոսաշրջային խոշոր նախագծի դեմ: Նախագիծը կապվում է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփի փեսայի՝ Ջարեդ Քուշների ներդրումային նախաձեռնությունների հետ: Սակայն ժամանակի ընթացքում բողոքի ակցիաները վերածվել են ավելի լայն հակահիշխանական շարժման: Ցուցարարները մեղադրում են ինչպես իշխանություններին, այնպես էլ ընդդիմությանը երկրի քաղաքական եւ տնտեսական խնդիրները չլուծելու մեջ: Կազմակերպիչները ներկայացրել են հինգ հիմնական պահանջ՝ կառավարության հրաժարական, ռազմավարական ներդրողների համար նախատեսված հատուկ կարգավիճակների եւ համապատասխան օրենսդրության վերացում, այսպես կոչված «Լեռնային փաթեթի» չեղարկում, պահպանվող տարածքների մասին օրենքում կատարված փոփոխությունների հետկանչ եւ մշակութային ժառանգության մասին օրենքում կատարված փոփոխությունների վերացում: Ալբանիայի կառավարությունը, իր հերթին, պնդում է, որ Ադրիատիկ ծովի ափին նախատեսվող նախագիծը կարող է արմատապես փոխել երկրի տնտեսությունը՝ նպաստելով բարձրակարգ զբոսաշրջության զարգացմանը եւ Եվրոպական միությանը անդամակցելու նպատակների իրագործմանը: Նախագիծը ներառում է երկու հիմնական բաղադրիչ՝ Նարտայի ծովածոցի արգելոցային տարածքում ծովափնյա հանգստավայրի կառուցում եւ նախկին ռազմական բազա հանդիսացող Սազան անմարդաբնակ կղզու վերափոխում զբոսաշրջային կենտրոնի: Վարչապետ Էդի Ռաման ավելի վաղ հայտարարել էր, որ նախագծի դեմ արշավը սոցիալական ցանցերում խթանվում է հակասեմական քարոզչության եւ արտաքին ուժերի կողմից՝ երկրում լարվածություն հրահրելու նպատակով: Միեւնույն ժամանակ, Եվրոպական հանձնաժողովը երեքշաբթի կոչ է արել ալբանական իշխանություններին անհապաղ քայլեր ձեռնարկել՝ շրջակա միջավայրի պաշտպանության ոլորտում ԵՄ չափանիշներին համապատասխանելու համար: Բրյուսելում ընդգծել են, որ Ալբանիան պետք է խուսափի այնպիսի գործողություններից, որոնք կարող են վտանգել երկրի եվրոպական ինտեգրման գործընթացը: Բողոքի շարժման կազմակերպիչները հայտարարել են, որ առաջիկա օրերին ցույցերը կշարունակվեն, քանի որ իրենց պահանջները մնում են անփոփոխ:

Ա. Վ.

ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՐՎԱԾՆԵՐ

ԼԱՐՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԱՃՈՒՄ Է

ԱՄՆ-ն եւ Իրանը երկրորդ օրն անընդմեջ փոխադարձ ռազմական հարվածներ են հասցրել Մերձավոր Արեւելքում վտանգի տակ դնելով ապրիլին ձեռք բերված հրադադարը: ԱՄՆ Կենտրոնական հրամանատարությունը (CENTCOM) հայտարարել է, որ իրականացրել է «ինքնաթռչող հարվածների» նոր շարք՝ թիրախավորելով Իրանի հարավային հատվածում գտնվող ռազմական, հետախուզական եւ ռադիոտեղորոշիչ օբյեկտներ:

Հարվածներից ժամեր առաջ ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփը հայտարարել էր, որ ամերիկյան ուժերը շարունակելու են «կոշտ հարվածներ» հասցնել Իրանին՝ ընդգծելով, որ Թեհրանը չափազանց երկար ժամանակ է ձգձգում հակամարտության վերջնական կարգավորման շուրջ բանակցությունները: Իրանը պատասխանել է՝նոր հրթիռային եւ անօդաչու հարվածներ հասցնելով տարածաշրջանում տեղակայված ամերիկյան ռազմական օբյեկտներին: Իրանական կրակի տակ կրկին հայտնվել են Բահրեյնում եւ Քուվեյթում գտնվող ամերիկյան ռազմաբազաները:

Իրանի Իսլամական հեղափոխության պահապանների կորպուսը (ԻՀՊԿ) հայտարարել է նաեւ, որ բալիստիկ հրթիռներով հարվածել է Հորդանանում գտնվող ամերիկյան հրամանատարական կենտրոնին՝ Մուվաֆաք Սալթի ավիաբազային: Իրանական կողմի պնդմամբ՝ ոչնչացվել են ամերիկյան ռազմական ինքնաթիռներ եւ ենթակառուցվածքներ, սակայն այս տեղեկությունները դեռեւս անկախ աղբյուրներով չեն հաստատվել:

Բահրեյնի ներքին գործերի նախարարությունը հայտնել է, որ իրանական անօդաչու թռչող սարքերի խոցումից հետո բեկորներ են ընկել մայրաքաղաք Մանամայի եւ Համադ Թաունի բնակելի հատվածներում՝ վնասելով տներ եւ ավտոմեքենաներ: Վիրավորվել է 11-ամյա մի աղջիկ, որը ստացել է թեթեւ վնասվածքներ:

Քուվեյթի բանակն էլ հայտարարել է, որ հակաօդային պաշտպանության համակարգերը ոչնչացրել են «թշնամական օդային թիրախներ»: Երկիրը ժամանակավորապես փակել էր իր օդային տարածքը, սակայն ավելի ուշ այն վերաբացվել է: Միաժամանակ, Իրանի պետական լրատվամիջոցները հաղորդել են Թեհրանում, Բանդար Աբբաս նավահանգստային քաղաքում եւ Հորմուզի նեղուցի հարակից շրջաններում տեղի ունեցած պայթյունների մասին: ԻՀՊԿ-ն նաեւ հայտարարել է, որ հարվածել է Հորմուզի նեղուցով անցնող երկու նավթատար նավերի: Ավելի վաղ իրանական պետական լրատվամիջոցները հայտնել էին, թե նեղուցն ամբողջությամբ փակվել է բոլոր տեսակի նավերի համար, սակայն ԱՄՆ Կենտրոնական հրամանատարությունը պնդում է, որ առեւտրային նավերը շարունակում են անցնել նեղուցով:

Լարվածության ֆոնին նավթի համաշխարհային գներն աճել են: Brent տեսակի նավթի գինը բարձրացել է մինչեւ շուրջ 95 դոլար մեկ բարելի դիմաց՝ գրանցելով մոտ 2 տոկոս աճ: Իրադարձությունների զարգացումները կասկածի տակ են դնում ապրիլին ձեռք բերված հրադադարի կենսունակությունը: ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիու Գուտերեշը հայտարարել է, որ Մերձավոր Արեւելքը «ավելի ու ավելի է խորանում ճգնաժամի մեջ»:

«Մենք չպետք է թերագնահատենք այն վտանգը, որ սահմանափակ բախումները կարող են վերածվել լայնամասշտաբ պատերազմի: Բոլոր կողմերը պետք է վերադառնան դիվանագիտական ճանապարհին: Այլեւս ոչ մի հարձակում, այլեւս ոչ մի արդարացում»,-նշել է Գուտերեշը:

ԱՆԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՀԱԿԱՄԻԳՐԱՑԻՈՆ ՑՈՒՅՑԵՐ

Հյուսիսային Իռլանդիայի մայրաքաղաք Բելֆաստում երկրորդ օրն անընդմեջ շարունակվել են հակամիգրացիոն բողոքի ակցիաները, որոնք ուղեկցվել են անկարգություններով եւ ոստիկանության հետ բախումներով: Չորեքշաբթի երեկոյան ոստիկանությունը ստիպված է եղել ջրցան մեքենաներ կիրառել ցուցարարներին ցրելու համար: Սեւ հագուստով եւ դիմակավորված տասնյակ ցուցարարներ քարեր եւ շշեր են նետել իրավապահների ուղղությամբ, ինչպես նաեւ հրկիզել մեքենաներ եւ աղբամաններ: Լարվածությունը սկսվել է այն բանից հետո, երբ սոցիալական ցանցերում տարածվել է դաժան տեսանյութ, որտեղ երեւում է, թե ինչպես է մի տղամարդ փողոցի մեջտեղում դանակով հարձակվում մեկ այլ տղամարդու վրա՝ վնասվածքներ հասցնելով նրա դեմքին եւ պարանոցին: Դեպքի առթիվ ձերբակալվել է 30-ամյա սուդանցի տղամարդ, որը դատարանում ներկայացվել է որպես Հադի Ալոդիդ: Նրան մեղադրանք է առաջադրվել սպանության փորձի համար: Հարձակման զոհը՝ Սթիվեն Օգիլվին, ծանր վնասվածքներ է ստացել աչքերի շրջանում, ինչպես նաեւ կտրվածքներ՝ դեմքի եւ մեջքի հատվածներում: Նա շարունակում է բուժում ստանալ հիվանդանոցում: Տուժածի ընտանիքը դատապարտել է հետագա անկարգությունները՝ հայտարարելով, որ թեեւ ցնցված են կատարված հարձակմամբ, սակայն չեն ցանկանում, որ այդ դեպքն օգտագործվի հասարակության մեջ բաժանարար գծեր ստեղծելու կամ միգրանտների նկատմամբ թշնամանք հրահրելու համար: «Մեր երկրում կան բազմաթիվ միգրանտներ, որոնք կարեւոր ներդրում ունեն հասարակության կյանքում, այդ թվում՝ առողջապահության եւ սպասարկման ոլորտներում: Մենք չենք ցանկանում, որ այս ողբերգությունը ծառայեցվի մարդկանց իրար դեմ հանելու նպատակներին»,-նշել է ընտանիքը: Միացյալ Թագավորության վարչապետը տեղի ունեցած անկարգությունները որակել է «լիովին անընդունելի» եւ կոչ արել պահպանել հանգստություն: «Չկա որեւէ արդարացում այն բռնությունների եւ հրկիզումների համար, որոնք տեղի ունեցան Բելֆաստում: Պետք է թույլ տանք, որ ոստիկանությունը կատարի իր աշխատանքը»,-գրել է Սթարմերը X սոցիալական հարթակում: Անկարգությունների հետեւանքով Բելֆաստում վիրավորվել է առնվազն երկու ոստիկան, եւս երկու ոստիկան վնասվածքներ են ստացել Շոտլանդիայի Գլազգո քաղաքում տեղի ունեցած բողոքի ակցիաների ժամանակ: Իրավապահ մարմինները շարունակում են վերահսկել իրավիճակը՝ մտավախություն ունենալով, որ հակամիգրացիոն ցույցերը կարող են շարունակվել նաեւ առաջիկա օրերին:

Ա. Վ.

ԿՈՉ Է ԱՐԵԼ ՀՐԱԴԱԴԱՐԻ

ՄԱԿ-ի գլխավոր քարտուղար Անտոնիո Գուտերեշը կոչ է արել Միացյալ Նահանգների եւ Իրանի միջեւ լիակատար հրադադար հաստատել եւ վերականգնել նավագնացությունը Հորմուզի նեղուցում, որի լիակատար փակման մասին իրանական բանակը նախկինում հայտարարել էր: «Հորմուզի նեղուցում եւ նրա շրջակայքում նավարկության իրավունքների եւ ազատությունների սահմանափակումները դժվարություններ եւ անկայունություն են առաջացնում ամբողջ աշխարհում: Աշխարհը կարիք ունի լիակատար հրադադարի եւ նավարկության իրավունքների ու ազատությունների վերականգնման՝ միջազգային իրավունքին համապատասխան», - գրել է նա X-ում: Գլխավոր քարտուղարը հավելել է, որ «նույնիսկ լավագույն դեպքում» նեղուցի փակման հետեւանքները կզգացվեն «մինչեւ շատ ամիսներ», եւ զարգացող երկրները ամենաշատը կտուժեն:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ

ԸՆՏՐՎԵԼ Է ԿԱԼԱՆՔ, ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ ՀԵՏԱԽՈՒԶՈՒՄ

ՀՀ ֆինչական կոմիտեի պետության, սահմանադրական կարգի հիմունքների եւ հասարակական անվտանգության դեմ ուղղված հանցագործությունների քննության գլխավոր վարչությունում քննվող քրեական վարույթով իրականացված մեծածավալ առգրավումային եւ վարութային այլ գործողությունների արդյունքում պարզվել է, որ Տ.Ու.-ն շուրջ 4 տարի առաջ Ա.Հ.-ին եւ երկու եղբայրներին ունեցած 3 մլն 300 հզր ՀՀ դրամ պարտքի վերադարձման հարցը լուծելու նպատակով դիմել է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձի, Ալավերդի քաղաքի բնակիչ Ա.Կ.-ի մտերիմ Ա.Ա.-ին:



Տ.Ու.-ն տեսնելով, որ Ա.Ա.-ի կողմից վեճին լուծում չի տրվում, 2025 ապրիլի 3-ին նույն հարցով՝ Ա.Փ.-ի միջոցով դիմել է քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Ա.Կ.-ին, ով անօրինական օգուտ՝ 1 մլն 300 հզր ՀՀ դրամ գումար ստանալու դիմաց, իր անօրինական ազդեցությունն օգտագործելու միջոցով լուծել է նրանց միջեւ եղած մասնավոր վեճը: Բացի այդ, Տ.Ու.-ն 2025 թվականի ապրիլի 25-ին քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Ա.Կ.-ի կողմից ղեկավարվող քրեական ենթամշակույթ կրող խմբավորման անդամ Ա.Փ.-ի միջոցով դիմել է Ա.Կ.-ին՝ իր եւ իր ազգական Ա.Ա.-ի հետ ունեցած ֆինանսական խնդիրների եւ այդ կապակցությամբ վերջինիս կողմից իր հասցեին հնչեցրած վիրավորանքի կապակցությամբ առաջացած վեճն իր օգտին լուծելու խնդրանքով:

Մասնավոր վեճը Տ.Ու.-ի օգտին լուծելու նպատակով՝ Ա.Կ.-ն Ա.Ա.-ի հասցեին հնչեցրել է հայհոյանքներ՝ պահանջելով բոլորի ներկայությամբ ներողություն խնդրել, ինչը նա կատարել է:

Տ.Ու.-ի նկատմամբ հարուցվել է հանրային քրեական հետապնդում՝ Քրեական օրենսգրքի 325-րդ հոդվածի 1-ին մասով (քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելը) (2 դրվագ), Ա.Փ.-ի եւ Ա.Ա.-ի նկատմամբ՝ 324-րդ հոդվածի 1-ին մասով (քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելը կամ ներգրավելը), իսկ Ա.Կ.-ի նկատմամբ՝ 196-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (մի խումբ անձանց կողմից ֆիզիկական ուժեղ ցավ կամ հոգեկան ուժեղ տառապանք պատճառելը) 322-րդ հոդվածի 1-ին մասով (քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ տալը կամ ստանալը կամ պահպանելը) եւ 323-րդ հոդվածի 2-րդ մասի 5-րդ կետով (քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելը կամ ղեկավարելը): Քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող Ա.Կ.-ի նկատմամբ որպես խափանման միջոց ընտրվել է կալանքը, հայտարարվել հետախուզում:

Տ.Ու.-ի, Ա.Ա.-ի եւ Ա.Փ.-ի վերաբերյալ քրեական վարույթը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է հսկող դատախազին:

Ծանուցում. հանցագործության համար մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ Քրեական դատավարության օրենսգրքով սահմանված կարգով՝ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով:

ԼՈՒՐԵՐ

ՔԱՂԱՔԱՑՈՒ ԵՆ ԿԱԼԱՆԱՎՈՐԵԼ

Կոտայքի նախկին մարզպետ Կովալենկո Շահգալդյանի քաղաքապետ որդուն սպառնացել են ծեծել: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ վերջինիս նկատմամբ նման հայտարարություններ անող անձին իրավապահները ձերբակալել են, իսկ դատարանի որոշմամբ խափանման միջոց է ընտրվել տնային կալանք ու բացակայելու արգելքը:

Իսկ ո՞վ է մեղադրյալը: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Արտուր Գնելի Արսենյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 2026 թվականի հունվարի 21-ին տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաներն օգտագործելով, կատարել է խուլիգանություն, բացի այդ, քաղաքական հայացքներով, անձնական, ինչպես նաեւ սոցիալական բնույթի այլ հանգամանքներով պայմանավորված տեղեկատվական եւ հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ Չարենցավան համայնքի ղեկավար Հակոբ Շահգալդյանի նկատմամբ հնչեցրել է բռնություն գործադրելու հրապարակային կոչեր, ինչպես նաեւ հրապարակայնորեն քարոզել եւ արդարացրել է նման բռնությունը:

Նշենք, որ նախկին ՀՀԿ-ական մարզպետի որդին այսօր ակտիվ աշխատում է ՔՊ-ի համար:

Ք. Մ.

13.8 ՄԼՆ ԴՐԱՄԻ ՎՆԱՍԸ ՎԵՐԱԿԱՆԳՆՎԵԼ Է

ՀՀ քննչական կոմիտեի Երեւան քաղաքի քննչական վարչության Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժնում քննվող քրեական վարույթի նախաքննության ընթացքում պարզվել է, որ ընկերությունը ՀՀ է ներմուծել լիցենզիայում չներառված՝ ընդհանուր 48 հզր կգ մսամթերք, որից հետո մաքսային միջնորդական ծառայություններ մատուցող ընկերության օժանդակությամբ կազմել եւ հարկային մարմին են ներկայացրել խեղաթյուրված տվյալներով հայտարարագրեր, ինչի հետեւանքով ներմուծված ապրանքի համար 80% մաքսատուրքի փոխարեն վճարվել է 25%: Արդյունքում, ընկերությունը խուսափել է պետական բյուջե՝ 13 մլն 894 հզր 935 ՀՀ դրամի չափով հարկ եւ տուրք վճարելուց: Նախաքննության ընթացքում պետությանը պատճառված վնասն ամբողջությամբ վերականգնվել է:

ԲԱՑԱՀԱՅՏԵԼ ԵՆ

Հունիսի 5-ի գիշերը՝ ժամը 4-ին, Համայնքային ոստիկանության Կոտայքի բաժնում հաղորդում է ստացվել, որ մոտ մեկ ժամ առաջ տեխնիկական միջոցների գործադրմամբ բացել են Պետրոսյան փողոցում գտնվող խանութի դուռը եւ դրամարկղից փող գողացել: Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ: Համայնքային ոստիկանների ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում պարզվել է, որ 32-33 տարեկան երեք տղամարդ ավտոմեքենան կայանել են Սեւանի փողոցում, ապա մոտեցել հիշյալ խանութին, կատարել գողությունն ու հեռացել՝ մեքենան թողնելով նույն տեղում: Նույն օրը՝ ժամը 14.40-ին, երեքն էլ հայտնաբերվել են, ձերբակալվել ու ներկայացվել նախաքննական մարմին: Իրավապահների հետագա գործողություններով պարզվել է, որ խումբը, նույն կերպ՝ կոտրելով դուռը, նախկինում էլ խանութներից կատարել է գողություններ: Նախաքննությունը շարունակվում է:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՁԻՆՎՈՐԻ ԿԱԽՎԵԼՈՒ ԴԵՊՔԻ ՄԱՆՐԱՄԱՍՆԵՐԸ

ArmLur.am-ին հունիսի 2-ին մահացած զինվորի դեպքից մանրամասներ են հայտնի դարձել: Մասնավորապես, զինվորին կախված են գտել, որից հետո 4 ժամկետային զինծառայող է կալանավորվել: ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ հնչել է հայհոյանք, զինվորին ասել են՝ տնից սա կբերես, նսեմացման դրսեւորումներ, որից հետո Արամայիս Մերուժանի Գեւորգյանի գտել են կախված: Հիշեցնենք, որ, ըստ պաշտոնական հաղորդագրության՝ հունիսի 2-ին՝ ժամը 00:10-ի սահմաններում, հայտնաբերվել է ՊՆ N զորամասի զինծառայող Արամայիս Մերուժանի Գեւորգյանի դին: Դեպքի հանգամանքներն ամբողջովին պարզելու նպատակով ընթանում է քննություն: Հայտնել էինք, որ զինվորը, թեեւ առողջական որոշակի խնդիրներ է ունեցել, սակայն նրան համարել են պիտանի եւ զորակոչել զինվորական ծառայության:

Ք. Մ.

ՄԱՐԻԽՈՒԱՆԱՅԻ ՓԱԹԵԹՆԵՐ

Քանաքեռ-Զեյթունի համայնքային ոստիկաններն ու ոստիկանության գվադիայի ծառայողները հունիսի 2-ին՝ շրջիկ ծառայության ժամանակ, Պարույր Սեւակի փողոցում նկատել են կասկածելի վարք դրսեւորող մի տղամարդու, որն ինչ-որ բան էր փորձում թաքցնել ծառի բնի մոտ: Տեսնելով ոստիկաններին՝ տղամարդը դիմել էր փախուստի, ինչն արագ կանխվել էր: Ժամը 16.30-ին, թմրանյութ իրացնելու կասկածանքով, տղամարդը ձերբակալվել եւ իր վարած մեքենայով հանդերձ տեղափոխվել է բաժին: Մայրաքաղաքի Հովհաննիսյան փողոցի բնակիչ 33-ամյա տղամարդն ընդունել է, որ արդեն տեղադրել է մարիխուանայով չորս փաթեթ, եւս 21-ը՝ մեքենայում են: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, եւ քննչական գործողությունների արդյունքում նշված փաթեթները հայտնաբերվել են: Ըստ 33-ամյա տղամարդու՝ թմրամիջոցները ձեռք էր բերել տելեգրամյան ալիքի միջոցով, տեղադրել ու լուսանկարներն ուղարկել ալիքի հասցեատիրոջը: Նրան ներկայացվել է մեղադրանք, խափանման միջոց է կիրառվել կալանքը:

ՓԼՈՒԶՎԵԼ Է

Հունիսի 11-ին՝ ժամը 09:44-ին, Սյունիքի մարզային օպերատիվ կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Քաջարան քաղաքի Գետափնյա փողոցում պատնեշ է փլուզվել. անհրաժեշտ է փրկարարների օգնությունը: Դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ: Պարզվել է, որ փլուզվել է Ողջի գետի հարակից բետոնե պատնեշը (մոտ 40մ). ավտոճանապարհը դարձել է միակողմանի երթեւեկելի: Փրկարարները սահմանազատել են տարածքը: Հետագա աշխատանքները շարունակելու համար անհրաժեշտ է հատուկ տեխնիկա:

● *Հունիսի 10-ից 11-ը հանրապետությունում բացահայտվել է մարմնական վնասվածք պատճառելու, խուլիգանության 6-ական դեպք:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԵՊԻ ՏԻՄ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հունիսի 7-ին կայացած ԱԺ ընտրությունների արդյունքներով Տավուշի մարզում իշխող «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը քվեների մեծ առավելություն ունի: Դա բացատրվում է մի շարք հանգամանքներով. վարչական ռեսուրսների օգտագործմամբ, մարզի գյուղերի բնակիչների կողմից պաշտոնական, իշխանական լրատվությունից զատ, այլընտրանքային տեղեկատվություն ստանալու դժվարություններով, խորհրդարանական ընտրություններից առաջ պետական կառույցների կողմից քաղաքացիներին հուզող զանազան հարցերը լուծելով եւ այլն: ՔՊ-ի ստացած քվեների առավելության մեջ սահմանամերձ գյուղերում, օրինակ՝ Նոյեմբերյան համայնքի Ոսկեպար, Բարեկամավան գյուղերում, մեծ դեր է կատարել այն, որ այդ գյուղերի ընտրական տեղամասերում քվեարկել են մեծ թվով զինծառայողներ: Ամենայն հավանականությամբ, բոլոր զինծառայողներն էլ քվե են տվել իշխող կուսակցությանը: Հունիսի 7-ի ԱԺ ընտրություններից հետո՝ այս տարվա աշնանը, Տավուշի մարզի 4 խոշոր համայնքներից 3-ում՝ Նոյեմբերյանում, Իջեւանում, Դիլիջանում, տեղի կունենան համայնքի ավագանու համամասնական ընտրակարգով ընտրություններ: Այդ ընտրությունների արդյունքում ձեւավորվելիք համայնքների ավագանիները կընտրեն նշված 3 համայնքների ղեկավարներ: Դիլիջան եւ Իջեւան համայնքները 2021 թվականից ղեկավարող Դավիթ Սարգսյանը եւ Արթուր Ճաղարյանը հունիսի 7-ի ընտրությունների արդյունքներով, իրենց համայնքներում ՔՊ-ի ստացած քվեների շատ քանակով կարող են հավակնել, որ աշնանը կայանալիք ՏԻՄ ընտրություններում հենց իրենք են լինելու համայնքի ղեկավարի ՔՊ կուսակցության թեկնածուն: Նոյեմբերյան համայնքը 2021 թվականից ղեկավարում է «Ապրելու երկիր» կուսակցության անդամ Արսեն Աղաբաբյանը, ով իր պաշտոնավարման 5 տարիներին իր աշխատանքում որոշակի հաջողությունների է հասել, բազմաթիվ ծրագրեր իրականացել: Աշնանը կայանալիք ՏԻՄ ընտրություններում, ամենայն հավանականությամբ, համայնքի ղեկավարի ՔՊ կուսակցության թեկնածուն լինելու է Մխիթար Խաչիկյանը, ում ընտանիքը Նոյեմբերյան համայնքում ԱԳԼՃԿ-ներ ունի: Մ. Խաչիկյանը նախկինում եղել է Նոյեմբերյան համայնքի ավագանու անդամ: Նոյեմբերյան քաղաքի բնակիչ Մ. Խաչիկյանի համար հունիսի 7-ի ԱԺ ընտրությունների քարոզարշավը հնարավորություն էր ՔՊ-ի քարոզչական խմբի կազմում շրջել Նոյեմբերյան համայնքի գյուղերում, անմիջական շփվել համայնքի բնակիչների հետ, իմանալ բնակիչներին հուզող խնդիրների մասին, իր անձը ճանաչելի դարձնել համայնքի գյուղերի բնակիչներին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՆՈՐ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ

ՕՐԱԿԱՆ ՄԻՆՉԵՎ 1 ԺԱՄ ՎՃԱՐՎՈՂ ԱԶԱՏ ԺԱՄԱՆԱԿ

Հունիսի 11-ին Ազգային Ժողովում քննարկման կդրվի կառավարության օրենսդրական նախաձեռնությունը, որով առաջարկվում է ՀՀ աշխատանքային օրենսգրքում ներդնել նոր հասկացություն՝ «ծնողական ժամ»: Եթե նախագիծն ընդունվի, հազարավոր աշխատող ծնողներ կստանան օրական մինչեւ մեկ ժամ վճարվող ազատ ժամանակ երեխաների խնամքի համար՝ առանց աշխատավարձի կորստի:

Սակայն սոցիալական նշանակություն ունեցող այս նախաձեռնությունն արդեն հասցրել է բուռն քննարկումների առիթ դառնալ. մինչ կառավարությունը խոսում է ընտանիքների աջակցության մասին, մասնագետները զգուշացնում են հնարավոր անհավասարությունների եւ գործատուների վրա ավելացող ֆինանսական բեռի մասին:

Ովքե՞ր կկարողանան օգտվել

Նախագծով նախատեսվում է, որ «ծնողական ժամ» ստանալու իրավունք կունենան.

մինչեւ 12 տարեկան երեխա ունեցող աշխատող ծնողները,

մինչեւ 18 տարեկան ֆունկցիոնալության ծանր կամ խորը սահմանափակում ունեցող երեխա խնամող ծնողները:

Աշխատողը պետք է գրավոր դիմում ներկայացնի, իսկ տրամադրված ժամանակը կհամարվի աշխատաժամանակ եւ ամբողջությամբ կվճարվի:

Որքա՞ն ազատ ժամանակ կտրամադրվի

Կառավարության առաջարկով՝

մինչեւ 2 երեխա ունեցող ծնողները կկարողանան ստանալ օրական մինչեւ 30 րոպե,

3 եւ ավելի երեխա ունեցողները՝ օրական մինչեւ 1 ժամ,

ծանր կամ խորը սահմանափակում ունեցող երեխա խնամող ծնողները՝ մինչեւ 1 ժամ՝ անկախ երեխաների թվից:

Սոցիալական աջակցությո՞ւն, թե՞ իրավական անորոշություն

Թեեւ նախաձեռնության սոցիալական նպատակը լայնորեն ընդունելի է, ԱԺ փորձագիտական եւ վերլուծական վարչությունը մատնանշել է մի շարք ռիսկեր: Գլխավոր մտահոգությունն այն է, որ նախագծում օգտագործված «մինչեւ 30 րոպե» եւ «մինչեւ 1 ժամ» ձեւակերպումները հստակ չեն սահմանում, թե իրականում որքան ժամանակ պետք է տրամադրվի աշխատողին: Արդյունքում նույն պայմաններում գտնվող երկու աշխատող կարող են ստանալ տարբեր չափի արտոնություն՝ կախված գործատուի որոշումից:

Փորձագետների գնահատմամբ՝ նման մոտեցումը կարող է ստեղծել խտրական կամ կամայական որոշումների վտանգ:

Գործատուները վճարելո՞ւ են նոր արտոնության համար

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննությունն էլ ուշադրություն է հրավիրել մեկ այլ խնդրի վրա. նախաձեռնությունը լրացուցիչ ծախսեր է առաջացնելու գործատուների համար: Փաստացի, աշխատողը կաշխատի ավելի քիչ ժամ, սակայն կստանա նույն աշխատավարձը: Սա հատկապես զգայուն կարող է լինել փոքր եւ միջին բիզնեսի համար, որտեղ յուրաքանչյուր աշխատաժամի կորուստ անմիջական ազդեցություն ունի արտադրողականության վրա:

Ե՞րբ կգործի նոր կարգավորումը

Եթե Ազգային Ժողովը հավանություն տա նախագծին, օրենքն ուժի մեջ կմտնի պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Այսպիսով, կառավարությունը փորձում է օրենսդրորեն ամրապնդել աշխատանքի եւ ընտանեկան կյանքի համատեղման նոր մեխանիզմ, սակայն հարցը մնում է բաց՝ «ծնողական ժամը» կդառնա՞ ընտանիքներին աջակցող արդյունավետ գործիք, թե՞ գործատուների եւ աշխատողների միջեւ նոր վեճերի աղբյուր:

Ա. ՎԱՐԴԱՆՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՔՆՆԱՐԿՎԵԼ Է

Տնտեսական հարցերի մշտական հանձնաժողովը հունիսի 10-ի նիստում քննարկել է Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի 2025 թվականի գործունեության մասին հաղորդումը: Այն ներկայացրել է ՊԵԿ նախագահ Էդուարդ Հակոբյանը: Նրա տեղեկացմամբ 2025 թվականին 2 տրիլիոն 725 մլրդ հարկային եկամուտներ են մուտք եղել պետական բյուջե:

Նշվել է, որ հաշվետու ժամանակահատվածում հարկ վճարողների շրջանում ստուգումների քանակի նվազման պայմաններում հնարավոր է եղել գրանցել ինչպես բացահայտումների, այնպես էլ մուտքերի էական աճ: «Դրան զուգահեռ մեծացրել ենք վերլուծական գործիքների դերը, որը ենթադրում է հեռավար վարչարարության իրականացում»,- ընդգծել է զեկուցողը:

ՊԵԿ նախագահը խոսել է ՀԴՄ կտրոններ պահանջելու մշակույթի զարգացման ու անկանխիկ գործարքների աճի մասին, անդրադարձել ստվերային շրջանառության բացահայտումներին, որը կազմել է 362 մլրդ դրամ:

Ըստ Էդուարդ Հակոբյանի՝ վերոնշյալը հնարավոր է դարձել օպերատիվ-հետախուզական միջոցառումներում թվային հետախուզության գործիքների ավելացման պայմաններում:

Խոսելով մաքսային վարչարարությունում գրանցած առաջընթացի մասին՝ զեկուցողը փաստել է, որ ստուգումների արդյունքում բացահայտումներն ավելացել են 19 տոկոսով:

Անդրադառնալով 2025 թվականին իրականացված բարեփոխումներին՝ ՊԵԿ նախագահը նշել է, որ հարկային վարչարարության գործիքների կատարելագործման տեսանկյունից ներդրվել է ավելացված արժեքի հարկի ավտոմատ վերադարձի համակարգը:

Զեկուցողը մանրամասներ է ներկայացրել նաեւ կոռուպցիայի դեմ պայքարում գրանցած նշանակալի արդյունքների վերաբերյալ, ապա պատասխանել պատգամավորների հարցերին:

ՀԱՐՁԱԿՄԱՆ Է ԵՆԹԱՐԿՎԵԼ

Հնդկական **Times Now** հեռուստաալիքի փոխանցմամբ՝ Օմանի ափերի մոտ հարձակման է ենթարկվել հնդիկ նավաստիներ տեղափոխող MT Jalveer առեւտրային նավը: Նավի զոհերի կամ վնասի մասին դեռեւս տեղեկություններ չկան, եւ իշխանությունները հետեւում են իրավիճակին: «Մենք տեղեկացել ենք Օմանի Շինաս նավահանգստի մոտ այսօր տեղի ունեցած նավի հետ կապված միջադեպի մասին: Մենք ուշադիր հետեւում ենք իրավիճակին եւ համագործակցում ենք տեղական իշխանությունների հետ՝ լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար», - հայտարարել է Օմանում Հնդկաստանի դեսպանատունը:

Սա Հորմուզի նեղուցում հարձակման ենթարկված երրորդ նավն է: Վերջին մի քանի օրերի ընթացքում Օմանի ափերի մոտ հարձակման են ենթարկվել Հնդկաստանի քաղաքացիների տեղափոխող երկու տանկեր: Հունիսի 8-ին Հնդկաստանի ափային պահպանությունը հայտարարել է Պալաուի դրոշի ներքո նավարկող տանկերից 24 հնդիկ անձնակազմի անդամների փրկության մասին, որը հրթիռային հարձակման էր ենթարկվել Օմանի ափերի մոտ: Հունիսի 9-ին Օմանի ծոցում ԱՄՆ ուժերի կողմից հարձակման է ենթարկվել «Սետտեբելլո» տանկերը, որի վրա 24 հնդիկ նավաստիներ էին: Անձնակազմի քսանմեկ անդամ փրկվել է, երկուսը զոհվել են, իսկ մեկը մնում է անհետ կորած:

● *Նախկինում կատարված հանցագործություններից հունիսի 10-ից 11-ը բացահայտվել է խարդախության 2 դեպք:*

ԲԱՆԿԵՐ

ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է

Ֆասթ Բանկը Fast Sports-ի եթերում ՖԻՖԱ աշխարհի առաջնության պաշտոնական ցուցադրման գլխավոր հովանավորն է: Ֆուտբոլասեր համայնքը հնարավորություն ունի հետեւելու ֆուտբոլային սպասված իրադարձությանը Fast TV հեռուստաալիքով ուղիղ հեռարձակմամբ: ՖԻՖԱ-ի աշխարհի առաջնությունը մեկնարկելու է հունիսի 11-ին Մեխիկոյի լեգենդար «Ացտեկա» մարզադաշտում, որտեղ Մեքսիկայի հավաքականը կմրցի Հարավային Աֆրիկայի դեմ: Այս տարի մրցաշարն անանախադեպ է իր ծավալներով. տեղի է ունենալու 104 հանդիպում 48 հավաքականների մասնակցությամբ: ՖԻՖԱ-ն ընդլայնել է աշխարհաքաղաքական ուղեգրերի քանակը, եւ այս տարի պատմության մեջ առաջին անգամ առաջնությանը մասնակցելու են Ուզբեկստանի, Հորդանանի, Կաբո Վերդե եւ Կյուրասաոյի հավաքականները: Հավելենք, որ ՖԻՖԱ-ի 23-րդ աշխարհի առաջնությունն ընթանալու է միաժամանակ երեք երկրներում՝ ԱՄՆ, Մեքսիկա եւ Կանադա: Ըստ ոլորտի մասնագետների կանխատեսումների՝ այս տարվա առաջնության գլխավոր ֆավորիտներն են Իսպանիան, Արգենտինան, Ֆրանսիան, Բրազիլիան եւ Անգլիան: ՖԻՖԱ-ի աշխարհի առաջնության եզրափակիչ խաղը տեղի կունենա հուլիսի 19-ին ԱՄՆ-ի «Մետլայֆ Սթեդիում» մարզադաշտում: Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ

Կոնվերս Բանկը եւ Mastercard-ը մեկնարկում են համատեղ արշավ Yandex Go հավելվածի միջոցով տաքսի ծառայությունից օգտվող հաճախորդների համար: Եթե Կոնվերս Բանկի Mastercard քարտապան եք, նախընտրում եք երթեւեկել հարմարավետ մեքենաներով եւ, միաժամանակ, խնայել, ապա այս արշավը հենց Ձեզ համար է: Հունիսի 8-30-ը պատվիրեք ուղեւորություն Yandex Go հավելվածով եւ օգտվեք հատուկ առաջարկից. «Ակտիվացրեք C360 Neo Light կամ ավելի բարձր դասի փաթեթ, ակտիվացրեք կամ դրան կցեք Ձեր Mastercard քարտը (ներառյալ՝ MC Digital-ը) եւ Yandex Go հավելվածում կատարեք վճարումներ՝ ստանալու համար.

- 5000 ՀՀ դրամի չափով պրոմոկոդ,
- մինչեւ 10% քեշբեք կատարած վճարումների դիմաց:
- Իսկ եթե Կոնվերս Բանկի Mastercard քարտապան եք, սակայն դեռեւս չեք ակտիվացրել C360 փաթեթ, միեւնույնն է, մասնակցեք արշավին եւ ստացեք մինչեւ 10% քեշբեք:

Նոր առաջարկը Կոնվերս Բանկի C360 էկոհամակարգի հերթական նախաձեռնությունն է, որի նպատակն է հաճախորդների առօրյան դարձնել ավելի հարմարավետ, իսկ ֆինանսական ծառայություններից օգտվելը՝ առավել շահավետ: Արշավի պայմաններին եւ սահմանափակումներին կարող եք ծանոթանալ conversebank.am կայքում կամ զանգահարելով 010 511 211 հեռախոսահամարով: *(Գ)*

ՖԱՍԹ ԲԱՆԿ Գ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐՆ ՈՒ ՀԱՋՈՂՈՒԹՅԱՆ ԲԱՆԱՁԵՎԸ

Հայաստանում բանկային ոլորտն այսօր գերհագեցած է, այս մրցակցային միջավայրում, սակայն, Ֆասթ Բանկն առանձնանում է իր ուրույն դիրքավորմամբ եւ մոտեցումներով: Ֆասթ Բանկի Խորհրդի աշխատակազմի ղեկավար Գոհար Արշակյանի հետ զրուցելու ենք Ֆասթ Բանկի ռազմավարության, զարգացման ուղղություններ եւ այլ գործոնների մասին:

- Տիկին Արշակյան, այս պահին Ֆասթ Բանկն ի՞նչ ռազմավարությամբ է դիրքավորվում հայկական ֆինանսական շուկայում, ո՞ր արժեքներն են Բանկը դարձնում վստահելի ու տարբերակվող:

- Նախ, մինչեւ ռազմավարության անդրադառնալը, նշեմ, որ 1994 թվականից ի վեր Ֆասթը որպես ֆինանսական կառույց անցել է բավականին հետաքրքիր եւ հետեւողական զարգացման ճանապարհ: Մեկ մասնաճյուղ ունեցող, լոմբարդային վարկեր տրամադրող ֆինանսական կառույցից վերափոխվելով մինչեւ 39 մասնաճյուղ ունեցող եւ արդեն իսկ 300 հազարից ավելի հաճախորդներ սպասարկող առեւտրային բանկի:

Եթե անդրադառնամ Բանկի արժեքներին, ապա հիմնական արժեքներն են հաճախորդամետ մոտեցումը, վստահությունը՝ գործել թափանցիկ եւ լինել վստահելի գործընկեր, ինչպես նաեւ հասանելիությունը եւ համարձակ ու նորարար գործելաոճը: Այստեղ խոսեցինք հասանելիությունից, երեւի որպես մրցակցային առավելություն արժի հիշատակել հենց մեր հասանելիությունը եւ անդրադառնալ այն հանգամանքին, որ այսօր տեխնոլոգիաների զարգացման այս դարաշրջանում օնլայն բանքինգի միջոցով 24/7 ռեժիմով հիմնականում ֆինանսական ծառայությունները հասանելի են հաճախորդներին, սակայն ի տարբերություն օնլայն տիրույթների, Ֆասթ Բանկն իր 39 մասնաճյուղերի միջոցով հասանելի է հաճախորդներին թե՛ Երեւան քաղաքում, թե՛ Հայաստանի բոլոր մարզերում: Նշեմ նաեւ, որ մասնաճյուղ առկա է Ջվարթնոց օդանավակայանում:

Տարբերող հատկանիշներից, ճիշտն ասած, կարծում եմ արժանի է հիշատակել, որ ֆինանսական կառույցը 100%-ով հայկական կապիտալով ֆինանսական կառույց է, Բանկ է: Եւ շատ ոգեւորիչ է տեսնել, որ այդ հետեւողական զարգացման արդյունքում բրենդն արդեն իսկ ներկայացված է Հայաստանի սահմաններից դուրս, մասնավորապես Անգլիայում գործող վարկային կազմակերպության տեսքով: Եւ հետաքրքիր կլինի երեւի նշել նաեւ, որ պլանավորում ենք բրենդի աշխարհագրության ընդլայնում, որի մասին առաջիկայում կլսի հանրությունը:

- Տիկին Արշակյան, Ֆասթ Բանկի անունը քանիցս լսում ենք տարբեր հասարակական հիմնախնդիրների լուծմանն ուղղված նախաձեռնություններում: Եթե փորձենք առարկայացնել, ապա Բանկի կորպորատիվ սոցիալական ռազմավարության եւ բարեգործության հիմնական շրջանակները որո՞նք են:

- Ճիշտ եք նկատել՝ Բանկն իր կորպորատիվ սոցիալական պատասխանատվության քաղաքականության շրջանակներում հանդես է գալիս այնպիսի նախաձեռնություններում, որոնք ունեն սոցիալական, կրթական, ինչպես նաեւ ազգային եւ միջազգային մշակութային ժառանգությունը պահպանելու նպատակ: Իհարկե, այս նախաձեռնություններն ընտրելիս մենք կարեւորում ենք վերջիններիս իրական ազդեցությունը նշված շրջանակների, ինչպես նաեւ երկարաժամկետ ազդեցությունը վերջիններիս վրա:

Եթե թվերի մասին խոսենք, նշեմ, որ անցյալ տարի օրինակ այդ արտաքին կորպորատիվ սոցիալական պատասխանատվության մեր միջոցառումների շրջանակներում Բանկն աջակցություն է ցուցաբերել մոտավորապես 600 ՀՀ միլիոն դրամից ավելի շրջանակներում, որոնց կենտրոնում եղել են կրթական, սոցիալական եւ մշակութային, ինչպես նաեւ սպորտային միջոցառումները: Վերջիններիս հետ կապված կարծում եմ հասարակությունն առանձին-առանձին տեղեկացվել է, եւ պիտի հայտնեմ, որ բացի արտաքին միջոցառումներից՝ կորպորատիվ սոցիալական պատասխանատվության, Բանկը մշտապես իրականացնում է նաեւ ներքին ԿՍՊ միջոցառումներ: Ինչու ներքին, որովհետեւ շահառուները հենց Բանկի աշխատակիցներն են, եւ դրանք դրսեւորվում են աշխատակիցների առողջության ապահովագրության, ինչպես աշխատակցի, այնպես էլ ընտանիքի անդամներին տրվող տարբեր կրթական, զարգացմանն ուղղված միջոցառումների, ինչպես նաեւ կորպորատիվ ու սոցիալական միջոցառումների շրջանակներում:

- Տիկին Արշակյան, իսկ ինչպե՞ս եք կազմակերպում արդյունավետ հաղորդակցությունը խորհրդի անդամների եւ ղեկավար օղակի միջեւ, եւ արդյո՞ք կանանց բնորոշ ճկունությունն առավելություն է տալիս Ձեզ այդ հարցում:

- Իրականում նախքան կանանց բնորոշ ճկունությանն անդրադառնալը, պիտի նշեմ, որ խորհուրդը բաժնետերերի ժողովից հետո Բանկի կառավարման բարձրագույն մարմինն է, եւ չնայած ես խորհրդի անդամ չեմ, այնուամենայնիվ աշխատանքի բնույթը եւ ինչու չէ նաեւ մթնոլորտը թույլ են տալիս առավելագույնն օգտագործել իմ փորձն ու գիտելիքները, ներդրում ունենալ Բանկի կառավարման զարգացման, ռազմավարական նպատակների իրագործման ճանապարհին, որն իրենից մեծ պատասխանատվություն է ենթադրում:

Պիտի առանձնացնեմ, որ եւ տնօրինությունը, եւ խորհրդի անդամները շատ բարձր էթիկական որակներ ունեցող եւ մասնագիտական լայն փորձ ունեցող անձինք են: Եւ իմ աշխատանքի արդյունավետ կազմակերպման ճանապարհին ինձ համար միակ մարտահրավերը դա արագ փոփոխվող եւ արագություն պահանջվող աշխատանքի հետ մեկտեղ որակի ապահովումն է, երբ դու գործ ունես այդքան մեծածավալ ինֆորմացիայի, լայն շրջանակների եւ խորը վերլուծության անհրաժեշտության հետ, երբեմն իրոք մարտահրավերային է, բայց կարծում եմ ստացվում է:

Եթե խոսենք կանացի հատկանիշների մասին, ես այստեղ պիտի նշեմ, որ կորպորատիվ կառավարման համար կարեւորագույն սկզբունքները, ինչպիսիք են պատասխանատվությունը, թափանցիկությունը, հաշվետվողականությունը շատ ներդաշնակ են կանացի որակների հետ: Եւ այս ամենն ունենալով, եթե կինը համատեղում է մեծ փորձառության, ցանկության եւ նպատակի հետ, ապա արդյունավետ կերպով կարող է կառավարել ինչպես մեծ խմբեր, թիմեր, այնպես էլ կազմակերպություններ: Եւ ինձ համար շատ ուրախալի է եւ ոգեւորիչ, որ Ֆասթ Բանկում կանայք ներկայացված են ոչ միայն տնօրինությունում, այլ նաեւ տնօրենների խորհրդում:

- Տիկին Արշակյան, խոսեցինք նորարարությունների, ֆինանսական պրոդուկտները թվայնացնելու՝ Բանկի վերափոխման մասին, կարծես պարադոքս է առաջանում՝ հաշվի առնելով Ֆասթ Բանկի՝ մարզերում ֆիզիկական ներկայացվածության ընդլայնման հետ:

- Հարցադրումը շատ հետաքրքիր է, եւ միեւնույն ժամանակ պիտի նշեմ, որ դրա շուրջ մենք ինքներս էլ ենք մտորում: Մեր ծառայությունների հիմքում հաճախորդների պահանջմունքներն են: Այս տեսակետից, ճիշտ է, մենք շարունակական աշխատանք ենք կատարում մեր մոբայլ հավելվածի, ընդհանրապես ուղիների զարգացման առնչությամբ, եւ պիտի նշեմ, որ այդ ներդրումը տալիս է իր արդյունքը, եւ տարեցտարի մոբայլ հավելվածի եւ՛ օգտատերերի քանակը, եւ՛ մոբայլ տիրույթում կատարվող գործարքների տեսակարար կշիռն էապես բարելավվում է, եւ մենք նպատակ ունենք, որ գործարքների մեծ մասը մեր հաճախորդներն իրականացնեն հենց օնլայն տիրույթում: Բայց այս ամեն ինչի հետ մեկտեղ մենք կարծում ենք, որ այն ֆիզիկական ներկայացվածությունը, որ Բանկն ունի, միանշանակ արդարացված եւ պահանջված է հաճախորդների կողմից: Եւ չնայած կարծիքները տարբեր են, մենք կարծում ենք, որ ապագայում հաջողելու են այն բիզնեսները, որոնք կկարողանան լավագույնս համատեղել ֆիզիկական ներկայացվածությունն օնլայն ուղիների հետ մեկտեղ: Եւ վերջիվերջո, արժեքների մասին նշելիս, ես խոսեցի վստահության մասին, եւ մեր կարծիքով՝ վստահությունն առաջին հերթին ձեւավորվում է մարդկային շփման միջոցով:

- Եւ վերջին հարցը, ըստ Ձեզ՝ ո՞րն է Ֆասթ Բանկի գլխավոր մարտահրավերն այսօր՝ վերափոխվող տնտեսության եւ տեխնոլոգիական գերակայության այս դարաշրջանում:

- Մարտահրավերներն իրականում ժամանակից կախված շատ են, բայց եթե ամփոփեմ, երեւի թե աշխարհաքաղաքական ներկայիս իրավիճակում, ինչպես նաեւ արագ փոփոխվող եւ բարձր մրցակցային արտաքին իրավիճակում՝ ապահովել կազմակերպության, տվյալ դեպքում Բանկի առաջանցիկ աճի տեմպը, իհարկե արդյունավետորեն կառավարելով ռիսկերը եւ մտքում ունենալով, որ տեխնոլոգիաների հետեւում մարդն է, եւ այն արժեքը, որ ստեղծվում է, դա կրկին մարդու համար է: Եւ տեխնոլոգիան միայն միջոց է, որպեսզի լուծենք մարդու խնդիրները եւ բարելավենք մարդու կյանքի որակը:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը ներկայացված է Երեւանում եւ Հայաստանի բոլոր մարզերում:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից (Գ)

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ,հայտարարություն,հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՐԴՇԻՆԲԱՆԿ

ԿՐԿԻՆ ԳԼԽԱՎՈՐ ՀՈՎԱՆԱՎՈՐՆ Է

Արդշինբանկը երկրորդ անգամ ստանձնեց Վերակառուցման եւ զարգացման եվրոդպական բանկի (ՎԶԵԲ) տարեկան ժողովի եւ բիզնես ֆորումի գլխավոր հովանավորի դերը (Flagship Sponsor)՝ վերահաստատելով իր ակտիվ ներգրավվածությունը միջազգային ֆինանսական համագործակցության եւ տնտեսական զարգացման օրակարգում:

Հունիսի 5-7-ը Ռիգայում անցկացված՝ «Անկայունությունից դեպի ճկունություն. տնտեսությունները փոփոխվող աշխարհում» խորագրով համաժողովը համախմբել էր միջազգային ֆինանսական հաստատությունների, ներդրումային կազմակերպությունների, պետական հատվածի եւ գործարար համայնքի ներկայացուցիչների: Պանելային քննարկումների եւ բիզնես հանդիպումների առանցքում համաշխարհային տնտեսության զարգացման հեռանկարներին, նորարարական լուծումներին, կայուն զարգացմանը, թվային փոխակերպումներին եւ մասնավոր հատվածի մրցունակության բարձրացմանը վերաբերող հարցեր էին: Ֆորումի շրջանակում տեղի ունեցավ պանելային քննարկում, որ ամբողջությամբ նվիրված էր Հայաստանին՝ «-Դիմակայունությունից դեպի մրցունակություն. Հայաստանի ներդրումային նոր տեսլականը» թեմայով, որին մասնակցեց Արդշինբանկի խորհրդի անդամ Հասմիկ Ղահրամանյանը: Նա նշեց, որ վերջին տասնամյակում Հայաստանում ձեւավորված մակրոտնտեսական կայունությունն ու ներդրումների համար բարենպաստ միջավայրը կարեւոր դեր են ունեցել երկրի տնտեսական առաջընթացի ապահովման գործում:

«Վերջին տասնամյակում ՀՀ-ում վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը 40%-ից աճել է մինչեւ շուրջ 70%՝ էականորեն նպաստելով տնտեսական աճին:

Միաժամանակ, տնտեսական հետագա առաջընթացում բանկային համակարգի դերակատարությունը պայմանավորված կլինի ոչ միայն ավանդական վարկավորման ծավալների աճով, այլեւ ենթակառուցվածքների զարգացմանն ու արտադրողականության բարձրացմանն ուղղված այլ ներդրումների ընդլայնմամբ»,- նշեց նա՝ հավելելով, որ Արդշինբանկն ակտիվորեն մասնակցում է ենթակառուցվածքային ծրագրերի ֆինանսավորմանը, գյուղատնտեսության եւ արդյունաբերության արդիականացմանը, ջրային տնտեսության զարգացմանը, ինչպես նաեւ ժամանակակից տեխնոլոգիական լուծումների ներդրմանը՝ դրանով իսկ բարձրացնելով ՀՆԱ-ի ներուժը:

Ֆորումի ընթացքում բանկը հանդես եկավ նաեւ որպես բովանդակային գործընկեր՝ կազմակերպելով «Ալգորիթմներից այն կողմ. արհեստական բանականության էվոլյուցիան» թեմայով պանելային քննարկումը, որը վարեց Արդշինբանկի վարչության անդամ, ռիսկերի կառավարման տնօրեն Լուսինե Ներսիսյանը: Քննարկմանը մասնակից միջազգային փորձագետները ներկայացրեցին, թե ինչպես է արհեստական բանականությունն (ԱԲ) աստիճանաբար վերածվում ոչ միայն աշխատանքների արդյունավետության բարձրացման գործիքի, այլեւ տնտեսության, բիզնեսի եւ կառավարման գործընթացների փոխակերպման առանցքային գործոնի: Անդրադարձ կատարվեց գեներատիվ եւ գործակալական ԱԲ համակարգերի զարգացման հեռանկարներին, ինչպես նաեւ պատասխանատու ԱԲ-ի թափանցիկության, կառավարման եւ մարդկային վերահսկողության կարեւորությանը:

ՎԶԵԲ տարեկան ժողովի եւ բիզնես ֆորումի գլխավոր հովանավորի կարգավիճակը հերթական անգամ ընդգծեց Արդշինբանկի միջազգային հեղինակությունն ու բանկի հանձնառությունը՝ աջակցելու Հայաստանի տնտեսության մրցունակության բարձրացմանը, մասնավոր հատվածի զարգացմանը, նորարարական նախաձեռնությունների առաջխաղացմանը եւ միջազգային համագործակցության ընդլայնմանը:

Հիշեցնենք, որ 2024 թվականին Երեւանում անցկացված ՎԶԵԲ 33-րդ տարեկան ժողովը եւ բիզնես ֆորումը նույնպես կազմակերպվել էր Արդշինբանկի գլխավոր հովանավորությամբ՝ Հայաստանը դարձնելով միջազգային ֆինանսատնտեսական քննարկումների կարեւոր հարթակներից մեկը:

1991 թվականին հիմնադրված Վերակառուցման եւ զարգացման եվրոպական բանկի բաժնետերերն են 77 պետություններ, Եվրոպական միությունը եւ Եվրոպական ներդրումային բանկը: Իր գործունեության ընթացքում ՎԶԵԲ-ը ներդրել է ավելի քան 220 միլիարդ եվրո՝ աջակցելով մասնավոր հատվածի զարգացմանը, կայուն տնտեսական աճին եւ տնտեսական վերափոխումներին Եվրոպայում, Կենտրոնական Ասիայում, Մերձավոր Արեւելքում եւ աֆրիկյան մի շարք երկրներում:Հայաստանը ՎԶԵԲ-ի անդամ է դարձել 1992 թվականի դեկտեմբերի 7-ին՝ բանկի կանոնադրական կապիտալում կատարելով 10 միլիոն եվրոյի ներդրում: Հայաստանի եւ ՎԶԵԲ-ի համագործակցության հիմնական ուղղություններն են էներգետիկան, տրանսպորտը եւ ֆինանսական ոլորտը:

Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից

ՄԱՐԶԱԿԱՆ

ՈՒԱՅԹԸ ԱՂԵՐՍԵԼՈՒ Է

Մինչ UFC-ի ղեկավարությունը փորձում է ցույց տալ, թե լիովին վերահսկում է իր մարտիկներին, թեթեւ քաշային կարգի վարկանիշային աղյուսակի առաջատար Արման Ծառուկյանն ապացուցում է, որ հնարավոր է հաջողությամբ շրջանցել համակարգը՝ օգտվելով պայմանագրային բացերից: Արմանի սփարինգ-զույգ Փեթ Դաունին, ով հայ մարտիկի հետ հանդես է գալիս Real American Freestyle (RAF) ըմբշամարտի լիգայում, վստահ է, որ Ծառուկյանը վերածվել է անկախ աստղի: Ըստ նրա՝ UFC-ի նախագահ Դանա Ուայթը շուտով ստիպված է լինելու խնդրել Արմանին վերադառնալ եւ տիտղոսային մենամարտ անցկացնել. «Նախկինում այս տղայի համար բարդ էր, հաճախ թվում էր, թե կազմակերպությունում նրա հանդեպ կանխակալ վերաբերմունք ունեն եւ արժանի հնարավորություններ չեն տալիս: Բայց այժմ նա այլեւս հանդես չի գալիս թույլի դիրքերից, նրան պետք չէ մենամարտեր աղերսել: Արմանն ամբողջությամբ փոխել է խաղը: Հիմա իրավիճակն այնպիսին է, որ ղեկավարությունը կարող է հայտնվել մի դրության մեջ, երբ ստիպված կլինի համոզել Արմանին վերադառնալ UFC: Ակնհայտ է, որ նա ֆինանսապես հիանալի դրսեւորում է իրեն նաեւ օկտագոնից դուրս: Սա ռազմավարական շատ գրագետ քայլ է»,- նշել է Դաունին:

UFC-ի ղեկավարներն անզգուշաբար աչք են փակել իրենց մարտիկների՝ կողմնակի եկամուտներ ունենալու հանգամանքի վրա՝ համարելով, որ ըմբշամարտի լիգաները պարզապես մարզավիճակը պահպանելու անվնաս միջոց են: Այս կարճատեսությունը, սակայն, կարող է հանգեցնել վերահսկողության կորստի:

Ըստ շրջանառվող լուրերի՝ Ծառուկյանը RAF-ում բլոգերների կամ ՄՄԱ-ի վետերանների հետ յուրաքանչյուր գոտեմարտի համար ստանում է շուրջ 100,000 դոլար, իսկ հովանավորչական պայմանագրերից նրա տարեկան եկամուտը հասնում է 3-4 միլիոն դոլարի: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ վտանգել առողջությունը ծանր մարզումային ճամբարներում եւ օկտագոնում՝ համադրելի գումարի դիմաց: Արմանի առաջիկա ծրագրերն իսկապես տպավորիչ են: Այս շաբաթ նրա համար սկսվում է իսկական մարաթոն.

Հունիսի 13 - RAF 10-ի շրջանակներում նա կմրցի լեգենդար Թոնի Ֆերգյուսոնի հետ:

Հունիսի 14 - Ներկա կգտնվի UFC-ի մրցաշարին՝ որպես Իլիա Թոփուրիա - Ջասթին Գեյջի սպասվող մենամարտի պահեստային մարտիկ:

Հուլիս - Կսկսի նախապատրաստվել RAF-ում Կուատ Խամիտովի եւ Քոլբի Քովինգթոնի դեմ սպասվող գոտեմարտերին:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Կորել է Երեւանի №1 բժշկական բազային ուսումնարանի 1996թ. «Քույրական գործ» բաժնի շրջանավարտ Շողիկ Սարգսի Սապոնջյանի դիպլոմը՝ Կ № 016355, գրանցման համար՝ 406:

ԶՊՄԿ-Ն ՄԻԱՑԵԼ Է

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ն (ԶՊՄԿ) ուրախ է հայտարարել, որ միացել է ՄԱԿ-ի «Գլոբալ պայմանագիր» միջազգային նախաձեռնությանը (United Nations Global Compact): Այն կորպորատիվ կայունության միջազգային խոշորագույն նախաձեռնություն է, որը միավորում է հազարավոր ընկերությունների, որոնք հավատարիմ են պատասխանատու բիզնես վարքագծին եւ կայուն զարգացմանը:

Միանալով ՄԱԿ-ի Համաշխարհային պայմանագրին՝ ԶՊՄԿ-ն իր գործունեությունն ու բիզնես պրակտիկաները համապատասխանեցնում է նախաձեռնության Տասը սկզբունքներին, որոնք վերաբերում են մարդու իրավունքներին, աշխատանքային հարաբերություններին, շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքին եւ հակակոռուպցիոն գործունեությանը՝ միաժամանակ նպաստելով ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակների (SDG) իրագործմանը: Այս որոշումն արտացոլում է ԶՊՄԿ-ի հանձնառությունը՝ բարելավելու իր բնապահպանական, սոցիալական եւ կորպորատիվ կառավարման (ESG) կատարողականը եւ ապահովելու իր գործունեության շարունակական համապատասխանեցումը կայունության միջազգային չափանիշներին եւ լավագույն փորձին:

«ՄԱԿ-ի «Գլոբալ պայմանագիր» նախաձեռնությանը միանալն արտացոլում է մեր հանձնառությունը՝ շարունակաբար կատարելագործելու մեր գործունեությունը եւ մեր գործընթացները համապատասխանեցնելու պատասխանատու կորպորատիվ վարքագծի միջազգային սկզբունքներին: Որպես Հայաստանի առաջատար հանքարդյունաբերական ընկերություն, մենք գիտակցում ենք մեր պատասխանատվությունը՝ արժեք ստեղծելու ոչ միայն արտադրության, այլեւ արդյունավետ կառավարման, շրջակա միջավայրի նկատմամբ պատասխանատու մոտեցման, անվտանգ աշխատավայրի եւ շահագրգիռ կողմերի հետ կառուցողական ներգրավվածության միջոցով», - նշել է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի գլխավոր տնօրեն Ռոման Խուդոլին: Նախաձեռնության շրջանակում ԶՊՄԿ-ն տարեկան կիրապարակի Առաջընթացի հաղորդակցություն (Communication on Progress, CoP), որը առաջընթացի վերաբերյալ հաշվետվություն է տասը սկզբունքների իրականացման ուղղությամբ, եւ հնարավորություն է տալիս համեմատել արդյունքները հանքարդյունաբերության եւ մետաղների ոլորտի առաջատար միջազգային ընկերությունների հետ:

ՄԱԿ-ի Գլոբալ պայմանագրին միանալը եւս մեկ կարեւոր հանգրվան է ԶՊՄԿ-ի կայուն զարգացման չափանիշները, կորպորատիվ կառավարումը եւ հաշվետվողականությունը բարելավելու ճանապարհին՝ շահագրգիռ կողմերի համար երկարաժամկետ արժեք ստեղծելու հանձնառությամբ:

ԶՊՄԿ-ն, օգտվելով առիթից, նաեւ տեղեկացնում է, որ ընկերությունը վերջերս ստացել է աշխարհի առաջատար ESG վարկանշային գործակալություններից մեկի կողմից վարկանիշ 2024 թ. համար: Երկու տարվա ընթացքում (2022-24) ԶՊՄԿ-ն բարելավել է իր ESG գնահատականը 20 կետով՝ գերազանցելով մետաղների եւ հանքարդյունաբերության ոլորտի համաշխարհային միջին ցուցանիշը եւ արձանագրելով զգալի առաջընթաց կայունության կատարողականի եւ կառավարման գործելակերպերի բարելավման ուղղությամբ: Այս արդյունքները հրապարակային չեն, սակայն ԶՊՄԿ-ն նախատեսում է դիմել 2025 հաշվետու տարվա համար հրապարակային ESG վարկանիշի, որի հրապարակումը սպասվում է 2026 թվականին:

● *Ա. Սպենդիարյանի անվան օպերայի եւ բալետի ազգային ակադեմիական թատրոնում հունիսի 23-ին՝ ժամը 19:00-ին, կկայանա «Անուշ» օպերան:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՅՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ո՞ր դեպքերում է բաղաքացիական ծառայողի համար նշանակվում ծառայողական քննություն:

Սուրեն Կիրակոսյան, 44 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Ծառայողական քննություն նշանակվում է ծառայողական պարտականություններն անհարգելի պատճառով չկատարելու եւ (կամ) ոչ պատշաճ կատարելու եւ (կամ) ծառայողական լիազորությունները վերազանցելու եւ (կամ) աշխատանքային կարգապահական ներքին կանոնները խախտելու եւ (կամ) քաղաքացիական ծառայողի վարքագծի կանոնները խախտելու եւ (կամ) հանրային ծառայողի նկատմամբ կիրառվող այլ սահմանափակումները չպահպանելու եւ (կամ) շահերի բախման կանոնները, նվերներ ընդունելու արգելքը խախտելու դեպքերում, ինչպես նաեւ քաղաքացիական ծառայողի գործունեությանն առնչվող եւ (կամ) աշխատանքային հարաբերություններ-ի հետ կապված հարցերի պարզաբանման դեպքերում:

Քաղաքացիական ծառայության գրասենյակ

Էջը՝ ՄԱՐԻԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Ինչպե՞ս ստանալ վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա:

Վազգեն Սիմոնյան, 54 տարեկան

ՊԱՏԱՍԽԱՆ. Վիճակախաղերի կազմակերպման լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին», «Պետական տուրքի մասին», «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների եւ Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի հուլիսի 1-ի «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» թիվ 987-Ն որոշման համաձայն: Վիճակախաղերի կազմակերպման լիցենզիան տրամադրվում է անժամկետ: Վիճակախաղերի կազմակերպման լիցենզիան տրամադրվում է նախատեսված բոլոր փաստաթղթերը ներկայացնելուց հետո՝ 23 աշխատանքային օրվա ընթացքում (լիազոր մարմնի որոշմամբ կարող է երկարաձգվել եւս 23 աշխատանքային օրով) վիճակախաղերի, շահումով խաղերի, ինտերնետ շահումով խաղերի եւ խաղատների լիցենզավորող հանձնաժողովի եզրակացության հիման վրա:

Հայտատուները վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա ստանալու համար ՀՀ ֆինանսների նախարարություն են ներկայացնում ՀՀ կառավարության 01.07.2004թ. թիվ 987-Ն որոշմամբ հաստատված հայտը եւ կից փաստաթղթերը, որոնք կարող են ներկայացվել առձեռն, փոստով կամ էլեկտրոնային տարբերակով: Հայտատուները կարող են լիցենզիա ստանալու համար անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնել էլեկտրոնային տարբերակով՝ համաձայն ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 24-ի թիվ 1283-Ն որոշման:

Լիցենզիա ստանալու համար տարեկան պետական տուրքը կազմում է 600 000 000 ՀՀ դրամ: Հայտատուն վիճակախաղերի կազմակերպման լիցենզիա ստանալու համար Կենտրոնական գանձապետարանի 900005162137 հաշվեհամարին վճարում է 600 000 000 ՀՀ դրամ եւ կարող է լիցենզավորող մարմին պետական տուրքի վճարումը հավաստող փաստաթուղթ չներկայացնել:

Հայտարարագիր՝ «Վիճակախաղերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 4.1-ին հոդվածով կիրառվող պահանջների համապատասխանության վերաբերյալ

ՀՀ ֆինանսների նախարարություն

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ Գագիկ Շամշյանի

Կոտայքի մարզում բեռնատարը հողային աշխատանքներ կատարելիս կողաշրջվել է. կան վիրավորներ:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի
ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ
քաղաքային հեռախոս՝ _____

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

	Շիրակ	+ 8 + 12 + 18 + 22
	Կոտայքի լեռներ	+ 8 + 11 + 17 + 20
	Կոտայքի նախալեռներ	+ 14 + 18 + 24 + 27
	Գեղարքունիք	+ 8 + 12 + 18 + 22
	Լոռի	+ 12 + 15 + 19 + 23
	Տավուշ	+ 12 + 15 + 20 + 23
	Արագածոտնի լեռներ	+ 8 + 11 + 17 + 20
	Արագածոտնի նախալեռներ	+ 13 + 18 + 22 + 27

	Արարատ	+ 16 + 19 + 26 + 29
	Արմավիր	+ 16 + 19 + 27 + 30
	Վայոց ձորի լեռներ	+ 6 + 10 + 17 + 21
	Վայոց ձորի նախալեռներ	+ 15 + 19 + 27 + 30
	Սյունիքի լեռներ	+ 7 + 10 + 17 + 21
	Սյունիքի նախալեռներ	+ 11 + 14 + 21 + 25
	Սյունիքի հովիտներ	+ 16 + 20 + 28 + 32
	Երեւան	+ 17 + 19 + 28 + 30

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.06.2026**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*